Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
ապրիլի 22-ի նիստի N 18
արձանագրային որոշման

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Ուրուգվայի Արևելյան Հանրապետությունը, այսուհետ՝ «Կողմեր»

Ուղղորդվելով երկու պետությունների միջև բարեկամական և փոխըմբռնման հարաբերությունները ամրապնդելու ցանկությամբ,

Գիտակցելով փոխադարձ շահերի առկայությունը և ընդհանուր նպատակներին ուղղված ջանքների համակարգման անհրաժեշտությունը,

Գնահատելով երկու պետությունների համար հետաքրքրության ոլորտներում փոխադարձ և արդյունավետ փոխադարձ համագործակցություն խորացման կարևորությունը՝ ուղղված ժողովուդների զարգացմանը,

Արտահայտելով իրենց ցանկությունը ամրապնդելու և առավելապես զարգացնելու երկու պետությունների միջև համագործակցային հարաբերությունները՝ հիմնված ազգային ինքնիշխանության, հավասարության և փոխադարձության սկզբունքների հարգման վրա՝ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների ու պետությունների ներպետական օրենսդրությունների համաձայն:

Համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված I

Սույնով Կողմերը պարտավորվում, իրենց ներպետական օրենսդրություններին համապատասխան, խթանել համագործակցությունը երկու պետությունների միջև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում՝ սույն Համաձայնագրի դրույթների համաձայն:

Հոդված II

Սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող համագործակցությունը կընդգրկի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներ, այդ թվում՝ տնտեսական, առևտրային, ֆինանսական, արդյունաբերական, գյուղատնտեսական, գիտական, տեխնիկական և մշակութային համագործակցության, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այլ ոլորտներ:

Հոդված III

Կողմերը համաձայնում են, որ այսուհետ սույն Համաձայնագիրն այն շրջանակն է, որը սահմանում է Կողմերի միջև համագործակցությունը կանոնակարգող ինստիտուցիոնալ շրջանակը, որի հիման վրա փոխադարձ հետաքրքրության ներկայացնող յուրքանչյուր ոլորտում Կողմերը կարող են կնքել լրացուցիչ համաձայնագրեր:

Այդ լրացուցիչ համաձայնագրերով կսահմանվեն Կողմերի միջև իրակացվելիք համագործակցության ծրագրերը և նախագծերը, դրանց նպատակները, ֆինանսական ու տեխնիկական ռեսուրսները և աշխատանքային ժամանակցույցերը, ինչպես նաև այն հատուկ բնագավառները, որոնցում դրան իրականացվելու են:

Ի լրումն՝ Հայաստանի Հանրապետության և Ուրուգվայի Արևելյան Հանրապետության համապատասխան կառույցներն ու կազմակերպությունները կարող են ստորագրել ոլորտային համագործակցության վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնք նրանք անհրաժեշտ կհամարեն երկկողմ

հարաբերությունները ամրապնդելու համար՝ Կողմերի արտաքին գործերի նախարարությունների հետ խորհրդակցելուց և համաձայնեցնելուց հետո:

Հոդված IV

Սույն Համաձայնագիրը, ինչպես նաև դրա շրջանակներում ընդունված միջոցները չպետք է հակասեն որևէ Կողմի միջազգային պարտավորություններին, որոնք բխում են այն միջազգային պայմանագրերից, որոնց կողմ է վերջինս:

Հոդված V

Կողմերի միջև ծագած յուրաքանչյուր տարաձայնություն կապված սույն Համաձայնագրի դրութերի մեկնաբանման կամ կիրառման հետ կլուծվի Կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով՝ դիվանագիտական ուղիներով:

Հոդված VI

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Այդ փոփոխություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի հոդված VII-ի դրույթների համաձայն և կլինեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված VII

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցման ամսաթվին, որով Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են, որ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար ներպետական օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ ընթացակարգերն ավարտվել են:

Հոդված VIII

Սույն Համաձայնագրիրը կգործի 5 (հինգ) տարի ժամկետով և դրա գործողությունը ինքնաբերաբար կերկարացվի լրացուցիչ հավասար ժամանակահատվածներով, բացառությամբ այն դեպքի, երբ Կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցի մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին, Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից առնվազն 3 (երեք) ամիս առաջ:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է սույն Համաձայնագրի դադարեցման մասին ծանուցել մյուս Կողմին ցանկացած ժամանակ, և Համաձայնագրի գործողությունը կդադարեցվի մյուս Կողմին ծանուցելու պահից 3 (երեք) ամիս անց:

Սույն Համաձայնագրի դադարեցումը չի խոչընդոտի այն ծրագրերի և նախագծերի իրականացմանը, որոնց վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել սույն Համաձայնագրի կամ դրա լրացուցիչ համաձայնագրերի շրջանակներում նախքան սույն Համաձայնագրի ուժը կորցնելը:

Կատարված է Մոնտեվիդեոյում 2014թ. հուլիսի 9-ին, հայերեն, իսպաներեն և անգլերեն լեզուներով: Բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանությունների ժամանակ առաջացած հակասությունների դեպքում կգերակայի անգլերեն լեզվով տարբերակը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝

Ուրուգվայի Արևելյան Հանրապետության կողմից՝